ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3410-Ա « 06 » սեպտեմբերի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի Հ.2587-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 37-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Սուսաննա Դավթյանի 04.09.2024թ. հ.Դ-112384-24 դիմումը.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2014 թվականի հուլիսի 3-ի «Անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին» հ.2587-Ա որոշման հավելվածի 1-ին կետը:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա. Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
06.09.2024թ.
հ. 3410-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Տաթևիկ Օհանյան	Շարուրի փողոց հ.14 շենք, հ.22	բնակարան	Տաթևիկ Օհանյանին սեփականության իրավունքով պատկանող, Շարուրի փողոցի հ.14 շենքի հ.22 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.05082024-01-0130, ընդ. բաժ. 1.08քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 30.13քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Շարուրի փողոց, հ.14 շենք, բն.22/1	011133B3AYXD	
2	Նունե Առուստամյան, Արսեն Սարգսյան	Նոր-Արեշ 22-րդ փողոց, հ.26/2	բնակելի տուն	Արսեն Սարգսյանին և Նունե Առուստամյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Նոր-Արեշ 22-րդ փողոցի հ. 26/2 հասցեում գտնվող բնակելի տանը /սեփ. վկ. հ.1511227/ տրամադրել հասցե՝ Ազատամարտիկների պողոտա, հ.87/7	0105322PYPNR	0020
3	Հակոբ Արմանդարյան /լիազորված անձ/ Վանիկ Ղուկասյան	Զաքարիա Քանաքեռցու /Կամոյի/ փողոց 3-րդ նրբ., հ.1	բնակելի տուն	Վանիկ Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող, Զաքարիա Քանաքեռցու /Կամոյի/ փողոցի 3-րդ նրբանցքի հ.1 հասցեում գտնվող բնակելի տանը /վկ. հ.29082024-01-0214/ տրամադրել հասցե՝ Զաքարիա Քանաքեռցու փողոց, 3-րդ նրբանցք, հ.1/1	01123XXCKS7Z	0052
4	Աշոտ Հովսեփյան	Սևքարեցի Սաքոյի փողոց, հ.2/7	բնակելի տուն	Անշարժ գույքի բաժնեմասի առանձնացման և բաժնեմասի առուվաճառքի 02.08.2024թ. հ.4454 պայմանագրով, Աշոտ Հովսեփյանի կողմից ձեռք բերված՝ Սևքարեցի Սաքոյի փողոցի հ.2/7 հասցեում գտնվող 98.6քմ մակերեսով բնակելի տանը տրամադրել հասցե՝ Սևքարեցի Սաքոյի փողոց, հ.2/9	010336ZBRXCT	

5	Ոսկան Մկրտչյան /լիազորված անձ/ Լիոնիկ Գրիգորյան	Չարենցի փողոց, հ.20 շենք, հ.6	ձեղնահարկ	Երևանի քաղաքապետի 22.08.2024թ. հ.3178-Ա որոշմամբ օրինական ճանաչված, Չարենցի փողոցի հ.20 շենքի հ.6 հասցեում գտնվող Լիոնիկ Գրիգորյանի կողմից ինքնակամ իրականացված 60.1քմ մակերեսով կառույցին /բնակելի /ձեղնահարկ/ տրամադրել հասցե՝ Եղիշե Չարենցի փողոց, հ.20 շենք, հ.5/1	01063ELVWDVL	0025
6	Սուսաննա Դավթյան	Արցախի փողոց, հ.46/10, Արցախի պողոտա, հ.46/1 և հ.46/12	հողամաս	Սուսաննա Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող, Արցախի փողոցի հ.46/10, Արցախի պողոտայի հ.46/1 և հ.46/12 հասցեներում գտնվող հողամասերին /վկ. հհ.08052024-01-0248, 02052024-01-0274 և 20082024-01-0012/ ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ Արցախի փողոց, հ.46/10	01113RWBQX5N	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ